Նախարարների կոմիտեի RecChL(2006)2
Հանձնարարականը Հայաստանում Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ Խարտիայի կիրառման առնչությամբ
(Ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2006 թ. հունիսի 14-ին..
Նախարարների տեղակալների 967-րդ նիստում)

Նախարարների կոմիտեն `

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ Եվրոպական խարտիայի Հոդված 16-ի համաձայն,

Նկատի ունենալով Հայաստանի կողմից 2002 թ. հունվարի 25-ին ներկայացված հայտարարագրերը,

Ուշադրության առնելով Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ Խարտիայի Փորձագետների կոմիտեի տված գնահատականը,

Ուշադրության առնելով Փորձագետների կոմիտեի զեկույցի բովանդակության վերաբերյալ Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները,

Հիշելով, որ գնահատականը հենվում է Հայաստանի ազգային զեկույցում ներկայացված տեղեկատվության, Հայաստանի իշխանությունների տրամադրած լրացուցիչ տեղեկատվության, Հայաստանում օրինականորեն հիմնված մարմինների և միությունների ներկայացրած տեղեկատվության և «ի տեղվույն» այցելության ընթացքում Փորձագետների կոմիտեի ձեռք բերած տեղեկատվության վրա,

Հանձնարարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է հաշվի առնեն Փորձագետների կոմիտեի բոլոր դիտողությունները և որպես առաջնահերթ խնդիր.

1. բարելավել ասորերենի, եզդիերենի և քրդերենի մատուցումը կրթական բոլոր մակարդակներում, մասնավորապես երաշխավորելով ուսուցիչների համարժեք վերապատրաստումը և ուսումնական նյութերի արդիականացումը,

2. բարելավել դատարաններում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների կիրառումը երաշխավորող իրավական հիմքը

3. միջոցներ ձեռք առնել բարելավելու ասորերենի և հունարենի առկայությունը ռադիոյով և ասորերենի, հունարենի, եզդիերենի և քրդերենի առկայությունը հեռուստատեսությամբ,

4. պարզաբանել, Հայաստանում կա՞ն արդյոք տարածաշրջանային կամ փոքրամասնությունների այլ լեզուներ բացի Հայաստանի վավերացման փաստաթղթում նշվածներից: